Արձանագրություն թիվ 1

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովի նիստի
գ. Եղեգնուտ կայացած՝ 23.01.2014թ. ժամը 14^{00} – ին:

Նախագահությամբ՝ Ռ. Մարգարյանի
քարտուղարությամբ՝ Ս. Ալեքսանյանի

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի բնակչության 61 անդամներ:
Ներկա էր Արմավիրի մարզպետարանի ֆինանսական բաժնի պետ՝ Հ. Հարությունյանը, ավագանու անդամներ, Եղեգնուտի համայնքի ղեկավարի Աշխատակազմը:

Օրակարգում.- Եղեգնուտի համայնքի ղեկավարի 2013 թվականի երկրորդ կիսամյակի հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին:
Զեկ. Ռ. Մարգարյան (համայնքի ղեկավար)

Համայնքի ղեկավար Ռազմիկ Մարգարյանը ներկայացրեց 2013թվականի երկրորդ կիսամյակում կատարած իր աշխատանքների մասին, մասնավորապես նշելով 2013թվականի երկրորդ կիսամյակում համայնքային բյուջեի արդյունքները, ինչպես մուտքային, այնպես էլ ծախսային մասով:
Այսպես՝ 01.07.2013.– 31.12.2013թվականը ընկած ժամանակաշրջանում համայնքի բյուջե մուտքագրվել է 18626.2 հազ. դրամ, որը կազմում է 92.4%, իսկ ծախսային մասը կազմում է 13374.3 հազ.դրամ, որը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 84 % - ը:

Մուտքագրվել է՝

	պլան	փաստացի կատ. / հազ. դրամ/	/%/
1. հողի հարկ	4265.1	3147.8	73.8
2. գույքահարկ իրավաբանական անձանցից	450	249.3	55.0
3. գույքահարկ ֆիզիկական անձանցից	960.0	859.6	95.4
4. հողի վարձավճար	2050.0	1467.0	71.6
5..այլ ոչ հարկային եկամուտներ	320.0	306.4	95.7
6. պետական բյուջեից ստացվել է դոտացիա	12049.3	12049.3	100.0
7. սուբվենցիա	0	511.0	-
8. տեղական տուրքեր	53.0	35.8	74.1
ԸՆԴԱՄԵՆԸ՝	20147.4	18626.2	92.4

Այսպիսով բյուջեի կատարողականը կազմում է 92.4% :

Վճարվել է.

	/հազար դրամ/
1. աշխատավարձ	7583.9
2. գրասենյակային և գրենական ապրանքներ	200
3. օգն. սոց. անապ. ընտանիքներին	1070.0
4 . էլեկտրական էներգիայի վճարը	879.3
5. միջոցառման կազմակերպում	250.0
6. տեղեկատվական ծառայություն	12.0
7.տրանսպորտային նյութեր	1267.0
8. համակարգչային սպասարկում մասնագ. ծառայություն	43.5
9. ներքին գործուղումներ	14.4
10. վարչական սարքավորումներ	959.0
11.կապի ծառայություններ	150.0
12.խ/մ ջրի պոմպի վերանորոգում	870.0
13. հատուկ նպատակային այլ նյութեր	

14. մասնագիտական ծառայություններ 75.0
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 13374.3

Համայնքի ղեկավարը նշեց, որ իրենց հարկային պարտավորություններում թերանում են հատկապես իրավաբանական անձինք:

Նշվեց նաև, որ համայնքում լուծվել են հետևյալ խնդիրները՝

1. կատարվել է շուրջ 4000000 միլիոն դրամի մանկապարտեզի նոր գույքի ձեռբերում,
2. ոռոգման ջրի 3 խորքային հորերի շահագործում,
3. գյուղապետարանի համար ձեռք են բերվել նոր տեղեկատվական սարքավորումներ,
4. լուծվել է համայնքի այգու ոռոգման ջրի հարցը:

Արտահատվեցին – Վ. Սիմոնյանը / Աշխատակազմի գլխ. մասնագետ/,
Է. Աբրահամյանը / ավագանի/, Վ. Մարգարյանը / ավագանի /,
Ե. Կարապետյանը / սեփականատեր /, Լ. Գևորգյանը / սեփականատեր/:

Ելնելով վերոգրյալից Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովը

որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի 2013 թվականի երկրորդ կիսամյակի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

2. Առաջարկել համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյանին և Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Վ. Սիմոնյանին՝
1) ապահովել իրավաբանական անձանց հարկային մուտքերը հողի հարկի, գույքահարկի և հողի վարձավճարների մասով, ըստ կիսամյակների 100% - ով:
2) ֆիզիկական անձանցից գանձումները հողի հարկի, վարձավճարների և գուքահարկի մասով ապահովել 100% - ով:

Նախագահ Ռ. Մարգարյան
Քարտուղար Ս. Ալեքսանյան

Արձանագրություն թիվ 2

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովի նիստի
գ. Եղեգնուտ կայացած՝ 23.01.2014թ. ժամը 13^{00} – ին:

Նախագահությամբ՝ Ռ. Մարգարյանի
քարտուղարությամբ՝ Ս. Ալեքսանյանի

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի բնակչության 61 անդամներ:
Ներկա էր Արմավիրի մարզպետարանի ֆինանսական բաժնի պետ՝ Հ. Հարությունյանը, ավագանու անդամներ, Եղեգնուտի համայնքի ղեկավարի Աշխատակազմը:

Օրակարգում.- Եղեգնուտի համայնքի ղեկավարի 2013 թվականի տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին:
Զեկ. Ռ. Մարգարյան (համայնքի ղեկավար)

Համայնքի ղեկավար Ռազմիկ Մարգարյանը ներկայացրեց տարեկան կատարած իր աշխատանքների մասին, մասնավորապես նշելով 2013 թվականին համայնքային բյուջեի տարեկան արդյունքները, ինչպես մուտքային, այնպես էլ ծախսային մասով:
Այսպես՝ 01.01.2013.– 31.12.2013թվականը ընկած ժամանակաշրջանում համայնքի բյուջե մուտքագրվել է 34346.2 հազ. դրամ, որը կազմում է 102%, իսկ ծախսային մասը կազմում է 23600.2 հազ.դրամ, որը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 84 % - ը:

Մուտքագրվել է՝

	պլան	փաստացի կատ. / հազ. դրամ/	/%/
1. հողի հարկ	5065.1	3879.6	76.6
2. գույքահարկ իրավաբանական անձանցից	600.0	249.3	45.0
3. գույքահարկ ֆիզիկական անձանցից	1000.0	2004.0	205.4
4. հողի վարձավճար	2200.0	1610.4	73.2
5..այլ ոչ հարկային եկամուտներ	720.0	1941.8	262.7
6. պետական բյուջեից ստացվել է դոտացիա	24098.5	24098.5	100.0
7. սուբսիդիա	0	511.0	-
8. տեղական տուրքեր	68.0	50.8	74.1%

Այսպիսով բյուջեի կատարողականը կազմում է 102.0% :

Վճարվել է.

	/հազար դրամ/
1. աշխատավարձ	14031.5
2. գրասենյակային և գրենական ապրանքներ	400.0
3. օգն. սոց. անապ. ընտանիքներին	1540.0
4 . էլեկտրական էներգիաի վճարը	1915.2
5. միջոցառման կազմակերպում	450.0
6. տեղեկատվական ծառայություն	119.6
7.տրանսպորտային նյութեր	2500.0
8. համակարգչային սպասարկում մասնագ. ծառայություն	78.5
9. ներքին գործուղումներ	34.4
10. վարչական սարքավորումներ	959.0
11.կապի ծառայություններ	227.0
12.խ/մ ջրի պոմպի վերանորոգում	870.0
13. հատուկ նպատակային այլ նյութեր	400.0
14. մասնագիտական ծառայություններ	75.0
ԸՆԴԱՄԵՆԸ՝	23600.2

Իր հարկային պարտավորությունները չի կատարում «Արգնու տուհմային ԹՏԽ» ԲԲԸ-ն, որի հողի հարկի և վարձավճարների ապառքը կազմում է 1017000 դրամ, իսկ «Բետարտշին» ՍՊԸ-ի 4800000 դրամի ապառքը դատարանի որոշմամբ կասեցվել է կազմակերպության սնանկացման գործնթացի պատճառով, իսկ 2013թվականի գույքահարկը և հողի հարկը վճարված չէ:

Նշվեց նաև, որ համայնքում առկա են հետևյալ խնդիրները՝

1. մանկապարտեզի նոր գույքի ձեռբերում և վերաբացումը,
2. համայնքի փողոցների լուսավորության անցկացում,
3. ոռոգման ջրի հիմնախնդիրների լուծում,

Արտահատվեցին – Վ. Սիմոնյանը / Աշխատակազմի գլխ. մասնագետ/,
Է. Աբրահամյանը / ավագանի/, Վ. Մարգարյանը / ավագանի /,
Ե. Կարապետյանը / սեփականատեր /, Լ. Գևորգյանը / սեփականատեր/:

Ելնելով վերոգրյալից Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովը

որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի 2013 թվականի տարեկան կատարած աշխատանքները գնահատել բավարար:

2. Առաջարկել համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյանին և Աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Վ. Սիմոնյանին՝
   ա) ապահովել իրավաբանական անձանց հարկային մուտքերը հողի հարկի, գույքահարկի և հողի վարձավճարների մասով, ըստ կիսամյակների 100% - ով:
   բ) ֆիզիկական անձանցից գանձումները հողի հարկի, վարձավճարների և գուքահարկի մասով ապահովել 100% - ով,
   գ) 2014 թվականի բյուջեի կատարողականը հասցնել մինչև 100% և կատարել քառամյա զարգացման ծրագրերի պահանջները:

Նախագահ՝ Ռ. Մարգարյան

Քարտուղար՝ Ս. Ալեքսանյան